«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

Ք.Երևան **27.08.2021թ.**

2021թ. օգոստոսի 27-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Տնօրինական խորհրդի 2021-2022 ուստարվա առաջին նիստը: Նիստին ներկա էին Քոլեջի հիմնադիր՝ Մարինե Նանյանը, խորհրդի նախագահ՝ Իրինա Վարդանյանը, քարտուղար՝ Լիլիթ Հարությունյանը, անդամներ՝ Նարինե Եգորյանը, Անահիտ Գյոզալյանը, Նունե Սահակյանը, հաշվապահ Սուսաննա Հովակիմյանը, Աշոտ Խուդաթյանը (ուսանող), Արմեն Բարեղամյանը (արտաքին շահակից), հրավիրված դասախոս Սեդա Կեսոյանը, և ՈԱ արտաքին փորձագետ՝ Արայիկ Գյոզալյանը:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը և դրվեց քվեարկության, որը միաձայն հաստատվեց:

1. Տնօրինական խորհրդի կազմի վերանայման և հաստատման մասին:
(Զեկուցող, Տնօրինական խորհրդի քարտուղար՝ Լ.Հարությունյան):
2. Ուսանողական խորհրդի կազմի վերանայման մասին:
(Զեկուցող, Ուսանողական խորհրդի նախագահ՝ Ա.Խուդաթյան):
3. 2021-2022 ուստարվա դիմորդների ընդունելության արդյունքների մասին:
(Զեկուցող՝ Ընդունելության հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ն.Սահակյան):
4. 2021-2022 ուստարվա ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների և նոր ՄԿԾ-ի փաթեթների հաստատման մասին:
(Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):
5. 2021-2022 ուստարվա հաստիքացուցակի և դասախոսական կազմի ծանրաբեռնվածության մասին:
(Զեկուցող, ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյան):

1. **Լսեցին.** Տնօրինական խորհրդի քարտուղար Լ.Հարությունյանի ելույթը Տնօրինական խորհրդի կազմի վերանայման և հաստատման վերաբերյալ:

Ողջունելով Խորհրդի անդամներին, Լ.Հարությունյանը տեղեկացրեց, որ անհրաժեշտություն է առաջացել վերանայել Տնօրինական խորհրդի կազմը: Հաշվի առնելով Քոլեջի հիմնադիր Մ.Նանյանի առաջարկը, Տնօրինական խորհրդում դասախոսական կազմից Հ.Գրիգորյանի փոխարեն անհրաժեշտ է ընտրել մեկ դասախոս:

Շարունակելով ելույթը՝ նա ներկայացրեց Մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված «Դեղագիտական առարկաների» ամբիոնի դասախոս Սեդա Կեսոյանի թեկնածությունը:

Ամփոփելով ելույթը՝ Լ.Հարությունյանն առաջարկեց քննարկել և հաստատել տնօրինական խորհրդի նոր կազմը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Տնօրեն՝ Ի.Վարդանյանը իր ելույթում նշեց, որ Ս.Կեսոյանը որպես դասախոս վայելում է ուսանողության և դասախոսական կազմի հարգանքը, ընկերասեր, պատասխանատու անձնավորություն է: Ի.Վարդանյանը հավելեց, որ «Դեղագիտական առարկաների» ամբիոնի վարիչ Հ.Գրիգորյանը ընտանեկան պայմաններից ելնելով դժվարանում է իրականացնել ամբիոնի վարիչի պարտականությունները և առաջարկել է Ս.Կեսոյանի թեկնածությունը ամբիոնի վարիչի պաշտոնում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել Տնօրինական խորհրդի նոր կազմը (կազմը կցվում է):
2. Հավանություն տալ Ս.Կեսոյանի թեկնածությանը «Դեղագիտական առարկաների» ամբիոնի ամբիոնի վարիչի պաշտոնում:
3. Հանձնարարել ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանին պատրաստել համապատասխան հրամանների նախագիծը և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

2. **Լսեցին**՝ Ուսանողական խորհրդի նախագահ Ա.Խուդաթյանի ելույթը Ուսանողական խորհրդի կազմի վերանայման և հաստատման վերաբերյալ:

Ա.Խուդաթյանը նախ շնորհավորեց Տնօրինական խորհրդի նիստի մասնակիցներին նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ, որից հետո ներկայացրեց Ուսանողական խորհրդի նոր կազմը: Ի տարբերություն նախորդ տարիների, այս տարվանից ՈԱ արտաքին փորձագետ, մ.գ.թ., դոցենտ Ա.Գ.Գյոզալյանի խորհրդատվության արդյունքում Ուսանողական խորհրդին կից կգործեն նոր ձևավորված երկու աշխատանքային հանձնաժողովներ՝ «Կառավարչական» և «Ուսումնական»:

Ներկայացնելով խորհրդի և հանձնժողովների կազմերը՝ Ա.Խուդաթյանը առաջարկեց քննարկել և կայացնել համապատասխան որոշում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի հիմնադիր Մ.Նանյանը իր ելույթում նախ ներկայցրեց ՈԱ արտաքին փորձագետ Ա.Գ.Գյոզալյանին, նշելով, որ ինքն անձամբ երկար տարիներ ճանաչում է, թե' որպես կրթության համակարգում երկար տարիների աշխատանքային փորձ ունեցող ՈԱ մասնագետ, և թե' որպես լավ անձնավորություն: Ա.Գյոզալյանի կողմից առաջարկված Ուսանողական խորհրդի նման մոդելը կնպաստի էլ ավելի արդյունավետ և թափանցիկ իրականացնել քոլեջում ուսումնական և կառավարչական գործընթացները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել Ուսանողական խորհրդի նոր կազմը իր աշխաանքային հանձնաժողովներով (կազմը կցվում է):
2. Հանձնարարել ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանին պատրասել համապատասխան հրամանի նախագիծը և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

3. **Լսեցին՝** Ընդունելության հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Ն.Սահակյանի ելույթը 2021-2022 ուստարվա դիմորդների ընդունելության արդյունքների վերաբերյալ:

Ն.Սահակյանը իր իր ելույթում ներկայացրեց 2021-2022 ուստարվա դիմորդների ընդունելության աշխատանքները, նշելով, որ համաձայն ընդունելության կարգի և լիցենզիայով սահմանված տեղերի իրականացվել է ընդունելություն: Ըստ ընդունելության արդյունքների կազմվել է համապատասխան արձանագրություններ (արձանագրություն-ները կցվում են):

Ցավոք եղել են նաև թափուր տեղեր:

Ամփոփելով ելույթը, Ն.Սահակյանը ներկայացրեց նաև իր կողմից իրականացված վերջին երեք տարվա ընդունելության արդյունքների համամետական վերլուծությունը: Նշեց, որ դիմորդների թվի նվազումը հիմնականում կապված է ՀՀ ԿՏԱԿ-ի կողմից էլեկտրոնային միասնական համակարգի ներդրմամբ: Այս ուղղությամբ անհրաժեշտ է մշակել և ներդնել ներքոլեջային այլ մեխանիզմներ, որը հնարավորություն կընձեռնի արագ հավաքագրել պոտենցիալ դիմորդներին և գրանցել միասնական տեղեկատվական համակարգում (վերլուծությունը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Տնօրեն՝ Ի.Վարդանյանը իր ելույթում նշեց, որ այս պատկերը այդքան էլ գոհացուցիչ չէ: Հաշվի առնելով այս հանգամանքը անհրաժեշտ է ակտիվացնել և նույնիսկ վերանայել քարոզչական միջոցառումների կազմակերպչական աշխատանքների մեխանիզմները: Անհրաժեշտ է ավելացնել այցելությունները դպրոցներ, իրականացնել հանդիպումներ աշակերտների և ծնողների հետ, որպեսզի կարողանանք լրացնել այս տարվա բացը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. 2021-2022 ուստարվա դիմորդների ընդունելության գործընթացի արդյունքները ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին կազմակերպել հանդիպումներ առաջին կուրսի ուսանողների հետ:

4. **Լսեցին՝** Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2021-2022 ուստարվա ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

Ն.Եգորյանը իր ելույթում ներկայացրեց 2021-2022 ուստարվա ուսումնական գործընթացին ընդառաջ ուսումնական մասի և ամբիոնների հետ համատեղ իրականացված նախապատրաստական աշխատանքները, որի արդյունքում.

- Վերանայվել են բոլոր մասնագիտությունների ուսումնական պլանները համաձայն ՊԿՉ-ների (ուսումնական պլանների նախագծերը կցվում են):
- Ուսումնական պլաններով նախատեսված դասաժամերը հաշվարկվել են, տնօրենի հետ համաձայնեցվել և տրամադրվել ամբիոններին:
- Կազմվել են համապատասխան ուսումնական խմբերը՝ հանրակրթական և մասնագիտական (ուսումնական խմբերը ենթախմբերի չեն բաժանվում):
- Պատրաստվել է ըստ կրթական ծրագրերի և կուրսերի դասացուցակները:
- Վերանայվել են ամբիոնների կազմերը:
- Ուսումնական մասնաշենքը և լսարանները մաքրությամբ, անհրաժեշտ կահավորմամբ պատրաստ են նոր ուսումնական տարվա մեկնարկին:

Ն.Եգորյանը ներկայացրեց նաև ՈԱ պատասխանատու Լ.Հարությունյանի կողմից «Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման» ընթացակարգի համապատասխան նախորդ ուստարվա ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ զեկույցը (զեկույցը կցվում է), որի արդյունքում վերանայվել են գործող ՄԿԾ-ը և մշակվել ՄԿԾ-ի նոր ձևաչափով ամբողջական փաթեթներ:

Շարունակելով ելույթը, Ն.Եգորյանը ներկայացրեց Մանկավարժական խորհրդում քննարկված 3 երկարաժամկետ հետազոտական ուղղությունները.

1. Սոցիալ տնտեսական և բժշկակենսաբանական հիմնահարցեր,
2. Ավանդական և ժամանակակից դեղաբանության հիմնահարցեր,
3. Մանկաբարձական և քույրական գործունեության ժամանակակից հիմնահարցեր:

Քոլեջում ունենալով հաստատված հետազոտական նպատակային ուղղություններ, Քոլեջի յուրաքանչյուր դասախոս հիմք ընդունելով այդ ուղղությունները, կկարողանա ընտրել և իրականացնել համապատասխան հետազոտություններ:

Ամփոփելով ելույթը Ն.Եգորյանը ներկայացրեց նաև երկու («Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու քաղաքականությունը և «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Միջին մասնագիտական կրթական ծրագրի դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման Կարգ) փաստաթղթերի նախագծերը, որոնք արդեն իսկ ներկայացվել է Մանկավարժական խորհրդի քննարկմանը (փաստաթղթերի նախագծերը կցվում են):

Հավելեց նաև, որ Մանկավարժական խորհրդին հանձնարարվել է երկամսյա ժամանակահատվածում ներկայացնել նախագծերի լրամշակված վերջնական տարբերակները Տնօրինական խորհուրդ՝ հաստատման:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Տնօրեն Ի.Վարդանյանը հավանություն տվեց ՄԿԾ-ի վերանայման աշխատանքները և առաջարկեց այն հաստատել և տրամադրել մասնագիտական ամբիոններին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Նախապատրաստական աշխատանքները ընդունել ի գիտություն և համարել բավարար:
2. Հաստատել ըստ մասնագիտությունների կրթական ծրագրերի փաթեթների նախագծերը ամբողջությամբ:
3. Հաստատել Քոլեջում իրականացվող երկարաժամկետ երեք հետազոտական ուղղությունները:
4. Հանձնարարել ՈԱ պատասխանատուին սեղմ ժամկետներում մասնագիտական ամբիոնների հետ կազմակերպել սեմինար խորհրդատվություններ:
5. Հանձարարել Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին ուստարվա վերջում ներկայցնել կատարողական զեկույց:

5. **Լսեցին.** ՄԴԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանի ելույթը 2021-2022 ուստարվա հաստիքացուցակի և դասախոսական կազմի ծանրաբեռնվածության վերաբերյալ:

ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանը հակիրճ ներկայացրեց 2021-2022 ուստարվա դասախոսական տարիֆիկցիայի հաստիքացուցակի նախագիծը, որը ձևավորվել է համաձայն գործող պաշտոնի անձնագրերի:

Նա նշեց, որ հաստիքացուցակը համապատասխանում է Քոլեջի կառավարման կառուցվածքին և գործող պաշտոնների անձնագրերին:

Ա.Գյոզալյանը ներկայացրեց նաև ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի զեկուցագիրը դասախոսական կազմի ծանրաբեռնվածության մասին, համաձայն նոր ուսումնական տարվա ուսումնական պլանի:

Ամփոփելով ելույթը, Ա.Գյոզալյանը առաջարկեց քննարկել և նախագիծը երաշխավորել ներկայացնելու Ընդհանուր ժողով հաստատման (հաստիքացուցակի նախագիծը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Տնօրեն՝ Ի.Վարդանյանը և ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը իրենց ելույթում նշեցին, որ ներկայացված փաստաթղթերը նախապես ուսումնասիրվել են իրենց կողմից և լիովին համապատասխանում են քոլեջի ներկայիս կառավարման կառուցվածքային համակարգին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Երաշխավորել 2021-2022 ուստարվա հաստիքացուցակը և ներկայացնել Ընդհանուր ժողով հաստատման:
2. Հանձնարարել ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանին նոր հաստատված հաստիքացուցակի մասին տեղեկացնել անձնակազմին:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2__

Ք.Երևան **15.11.2021թ.**

2021թ. նոյեմբերի 15-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի հերթական նիստը: Նիստին ներկա էին խորհրդի նախագահ՝ Ի.Վարդանյանը, քարտուղար՝ Լ.Հարությունյանը, անդամներ՝ Ն.Եգորյանը, Ս.Կեսոյանը, Ա.Գյոզալյանը, Ն.Սահակյանը, Ս.Հովակիմյանը, Ուսանողական խորհդի նախագահ՝ Ա.Խուդաթյանը, Ա.Բարեղամյանը (արտաքին շահակից):

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը ներկայացրեց օրակարգը, որը միաձայն հաստատվեց:

1. Ուսումնական մասի 2020-2021 ուստարվա կատարողականի ներկայացման մասին:
   (Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ, ՈԱ պատասխանաու ՝ Լ.Հարությունյան):
2. Քոլեջի 2020-2021 ուստարվա գործունեության հաշվետվության ներկայացում:
   (Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):
3. Քոլեջում կրթության որակի ներքին ապահովման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության հաղորդում (նոր փաստաթղթերի նախագծերի ներկայացում):
   (Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ, ՈԱ պատասխանաու՝ Լ.Հարությունյան):

1. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարիչ, ՈԱ պատասխանաու Լ.Հարությունյանի ելույթը Ուսումնական մասի 2020-2021 ուստարվա կատարողականի վերաբերյալ:

Ուսումնական մասի վարիչ Լ. Հարությունյանն իր ելույթում նշեց, որ Քոլեջի ուսումնական մասը պլանով նախատեսված բոլոր աշխատանքները և միջոցառումները կատարել է ամբողջովին: Ելույթում հակիրճ ներկայացրեց այն աշխատանքները, որոնք իրականացվել են, մասնավորապես՝

- Վերանայվել են 2020-2021 ուստարվա ըստ կրթական ծրագրերի ուսումնական պլանները:
- Դասախոսական կազմի հետ պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ,

իրականացրել քննարկումներ և տրամադրվել են անհրաժեշտ աջակցություն:

- Ուսումնամեթոդական ռեսուրսերի բարելավման աշխատաքները իրականացվել են ըստ ամբիոնների կողմից ներկայացված պահանջների:
- Տնօրենի հրամանով ձևավորված աշխատանքային խմբի կողմից ամբողջովին վերանայվել և մշակվել է 4 ՄԿԾ-ի փաթեթները և անհրաժեշտ փաստաթղթերը:

Ամփոփելով ելույթը, նա նշեց, որ 2020-2021 ուստարվա կատարված աշխատանքների ամբողջական կատարողականը ներկայացվել է տնօրենին և խորհրդի բոլոր անդամներին (կատարողականը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

- Արտաքին շահակից՝ Ա.Բարեղամյանը իր ելութում նախ շնորհակալություն հայտնեց Քոլեջի ղեկավարությանը իրեն ընձեռած վստահության համար, նշեց, որ հաշվետու ուստարին բարենպաստ էր այնքանով, որ Քոլեջում շրջանառության մեջ դրվեց ամբողջովին նոր ՄԿԾ-ի փաթեթներ: Նա նշեց նաև, որ ուժի մեջ է մնում 2022 թվականի ապրիլին նախատեսվող գործատուների հետ աշխատաժողովի կազմակերումը, քանի որ որոշ գործատուներ արդեն իսկ տղեկացված են այդ միջոցառման մասին:
- Ուսանող Ա.Խուդաթյանը տեղեկացրեց, որ ուսումնական մասի աշխատանքների վերաբերյալ ուսանողները հայտնել են իրենց գոհունակությունը ամբիոնի վարիչներին և ուսանողական խորհրդի անդամներին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն և կատարված աշխատանքները գնահատել բավարար (հաշվետվությունը կցվում է):
2. Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին հանձնարարել մինչև 2021-2022 ուստարվա ավարտը ուսանողների շրջանում կազմակերպել հարցումներ և զեկուցել կատարված արդյունքների մասին:

2. **Լսեցին.** Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը Քոլեջի գործունեության տարեկան հաշվետվության ներկայացման վերաբերյալ:

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանն իր ելույթում ներկայացրեց Քոլեջի գործունեության 2020-2021 ուստարվա հաշվետվությունը ամփոփ տեսքով: Նա նշեց, որ հաշվետու տարին ևս լարված էր Հայաստանում հայտարարված արտակարգ դրության պայմաններում: Նա նշեց, որ Քոլեջի գործունեության հաշվետվությունը հիմնականում կազմված է բոլոր ստորաբաժանումների կողմից ներկայացված կատարողականների ամբողջականությամբ: Հաշվետվությունը հակիրճ և ամփոփ ներկայացնելուց հետո, Ն.Եգորյանը տեղեկացրեց նաև, որ ՌԶԾ-ի պլան-ժամանակացույցով նախատեսված բոլոր գործողությունները իրականացվում են

համաձայն ժամկետների և վերջնարդյունքների:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Քոլեջի 2020-2021 ուստարվա գործունեության կատարողականը գնահատել բավարար:
2. Հանձնարարել Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին հաջորդ տարվա ընթացքում ներկայացնել ըստ գործողությունների բարելավման աշխատանքները:

3. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարիչ, ՈԱ պատասխանատու Լ.Հարությունյանի ելույթը Քոլեջում կրթության որակի ներքին ապահովման աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Լ.Հարությունյանն իր ելույթում նշեց, որ քոլեջում որակի ներքին ապահովման գործընթացներն ակտիվ իրականացվում են: Զեկույցում ներկայացրեց ՈԱ պատասխանատուի աշխատանքային պլանով նախատեսված 7 չափանիշների համար նախատեսված կարճաժամկետ գործողությունները և համապատասխան հիմքերը (կատարողական զեկույցը կցվում է):

Շարունակելով ելույթը, Լ.Հարությունյանը ներկայացրեց նաև ամբողջովին նոր մշակված չորս փաստաթղթերի նախագծերը, որոնք նախապես քննարկվել են Մանկավարժական և Ուսանողական խորհուրդներում: Խորհուրդների կողմից քննարկման ժամանակ ներկայացվել են մի քանի բանավոր առաջարկներ և դիտարկումներ, որոնք միանգամից ներառվել են նշված փաստաթղթերում:

Ամփոփելով ելույթը՝ Լ.Հարությունյանը ներկայացրեց «Դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի որակավորման բարձրացման և վերապատրաստման», «Խորհրդատուների գործունեության», ««Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Միջին մասնագիտական կրթական ծրագրի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման» կարգերի և ««Գրիգորիս» բժշկա - հումանիտար քոլեջի Ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու քաղաքականության» նախագծերը փաթեթով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը, Ս.Կեսոյանը և ուսանող Ա.Խուդաթյանը իրենց ելույթում նշեցին, որ անհրաժեշտ է հաստատել ներկայացված փաստաթղթերը, քանի որ դրանց կարիքը իրոք կար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն և ՈԱ պատասխանատուի կատարողականը

գնահատել բավարար:

2. Հաստատել ներկայացված փաստաթղթերի նախագծերը մեկ փաթեթով:
3. Հանձարարել Ուսումնական մասի վարիչ (ՈԱ պատասխանատու) Լ.Հարությունյանին հաստատված փաստաթղթերը ներկայացնել տնօրենին վավերացնելու համար:
4. Հանձարարել Ուսումնական մասի վարիչ (ՈԱ պատասխանատու) Լ.Հարությունյանին հաստատված փաստաթղթերը տեղադրել կայքում և տեղեկացնել ներքին շահակիցներին:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՏՆՕՐԻՆԱԿՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

Ք.Երևան **24.01.2022թ.**

2022թ. հունվարի 24-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի հերթական նիստը: Նիստին մասնակցում էին Խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը, քարտուղար՝ Լ.Հարությունյանը, անդամներ՝ Ն.Եգորյանը, Ս.Կեսոյանը, Ա.Գյոզալյանը, Ն.Սահակյանը, Ս.Հովակիմյանը, Ուսանողական խորհդի նախագահ՝ Ա.Խուդաթյանը և հրավիրված ՈԱ պատասխանատու՝ Ա.Գ.Գյոզալանը, իսկ արտաքին շահակից Ա.Բարեղամյանը հարգելի պատճառով չէր մասնակցում նիստին:

Նիստի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը, որն էլ քվեարկությամբ միաձայն հաստատվեց:

1. 2021-2022 ուստարվա աշնանային կիսամյակի ուսումնական գործընթացի կատարողականի և երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:

   (Զեկուցող՝ ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյան):

2. Քոլեջի 2021 թվականի բյուջեի կատարողականի և 2022 թվականի նախահաշվի կազմման մասին:

   (Զեկուցող՝ Հաշվապահ՝ Ս.Հովակիմյան):

3. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. ՌԶԾ-ի ընթացքի մասին:

   (Զեկուցող՝ ՈԱ պատասխանաու՝ Ա.Գ.Գյոզալյան):

4. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի «Դասախոսական կազմի ձևավորման և ազատման» կանոնակարգի վերանայման մասին:

   (Զեկուցող՝ ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյան):

1. **Լսեցին՝** Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի կատարողականի և 2-րդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Ն.Եգորյանը նախ ողջունեց Խորհրդի նիստի բոլոր մասնակիցներին, որից հետո տեղեկացրեց, որ 2021-2022 ուստարվա աշնանային կիսամյակով ըստ ուսումնական պլանի նախատեսված միջանկյալ և ամփոփիչ ստուգումները կազմակերպվել են համաձայն նախապես հաստատված ժամանակացույցի: Նա նշեց, որ 2021-2022 ուստարվա աշնանային կիսամյակի միջանկյալ և ամփոփիչ ստուգումների վերաբերյալ ընդհանուր թվային և որակական ամփոփ տվյալները կներկայացնի ուսումնական տարվա կատարողականում: Ինչ վերաբերում է ընթացիկ ուստարվա գարնանային կիսամյակի նախապատրաստական աշխատանքներին, ապա բոլոր անհրաժեշտ աշխատանքները գրեթե ավարտված են, մնացել է միայն հստակեցնել դասացուցակը: Ամբիոներին հանձնարարվել է ըստ իրենց պլան-ժամանակացույցի կազմակերպել ամբիոնի նիստերը:

Ամփոփելով ելույթը, նա նշեց, որ առաջին կիսամյակում բոլոր քննությունները անցկացվել են ըստ վարման կարգի, ուսանողների կողմից գիտելիքների գնահատման արդյունքների վերաբերյալ բողոքարկումներ և տարաձայնություններ չեն արձանագրվել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն և կատարված աշխատանքները գնահատել բավարար:
2. Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին հանձնարարել կազմակերպել վերահսկողություն և արդյունքների մասին պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել քոլեջի տնօրենին:

2. **Լսեցին՝** Հաշվապահ Ս.Հովակիմյանի ելույթը Քոլեջի 2021 թվականի բյուջեի կատարողականի և 2022 թվականի բյուջեի նախահաշվի կազմման վերաբերյալ:

Ս.Հովակիմյանը ներկայացրեց 2021թ. բյուջեի կատարողականը և նշեց, որ բյուջով նախատեսված բոլոր ծախսերը կատարված են (հիմք՝ 2021թ. կատարողական): Հաջորդիվ, Ս.Հովակիմյանը ներկայացրեց 2022 թվականի բյուջեի նախահաշվի նախագիծը (2022 թվականի բյուջեի նախահաշվի նախագիծը կցվում է), նշելով, որ այն մոտ 3% -ով պակաս է նախորդ տարվա բյուջեից: Ի տարբերություն նախորդ տարիների, 2022թ. բյուջեով նախատեսվում է զգալի ծախսեր, կապված ինստիտուցիոնալ

հավատարմագրման գործընթացների հետ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ժամանակին հավաքագրելու ուսման վարձավճարները:

Ամփոփելով ելույթը, Ս.Հովակիմյանը նշեց, որ հիմնադիր՝ Մ.Նանյանի հանձնարարությամբ առկա ֆինանսական խնայողության հաշվին 2021-2022 ուստարվա ընթացքում ևս կիրականացվի նյութատեխնիկական ռեսուրսների համալրում և արդիականացում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՈԱ պատասխանատու՝ Ա.Գ.Գյոզալյանը ի լրումն հաշվապահ Ս.Հովակիմյանի ելույթին ներկայացրեց ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթցի մոտավոր ծախսերը:

Ն.Եգորյանը իր ելույթում նշեց, որ ուսման վարձավճարների հավաքագրման գործընթացը գտնվում է անձամբ իր վերահսկողության ներքո և ամբիոնի վարիչների հետ պարբերաբար քննարկվում են:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Քոլեջի 2021 թվականի բյուջեի կատարողականը գնահատել բավարար:
2. Քոլեջի 2022 թվականի բյուջեի նախահաշվի նախագիծը երաշխավորել և ներկայացնել Քոլեջի Ընդհանուր ժողովի հաստատմանը:
3. Հանձնարարել Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին Տնօրինական խորհրդի հաջորդ նիստում ներկայացնել ուսման վարձերի հավաքագրման վերաբերալ տեղեկատվություն:

3. **Լսեցին** ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024 թվականների ռազմավարական զարգացման ծրագրի ընթացքի վերաբերյալ:

Ա.Գյոզալյանը իր ելույթում ներկայացրեց «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. ռազմավարական զարգացման գործող ծրագիր ընթացքը, որը ամբողջովին համաձայն պլան-ժամանակացույցի և ԳԱՑ-ի գործարկվում է և որևէ խնդիր չի առաջացել: Քոլեջում իրականացվող բարեփոխումներով պայմանավորված, ՊԻՍԲ շրջափուլի ամբողջական կիրառման նպատակով իրականացվել է 2018-2019, 2019-2020 և 2020-2021 ուսումնական տարիների պետական որակավորման հանձնաժողովների

նախագահների հաշվետվությունների վերլուծություն: Վերլուծության արդյունքում ներկայացվել են բարելավման հստակ առաջարկություններ:

Շարունակելով ելույթը, Ա. Գ. Գյոզալյանը նշեց նաև, որ համաձայն ՌԶԾ-ի պլան-ժամանակացույցի աշխատանքներ են տարվում 2022-2023 ուստարվա դիմորդների ցանկում ներառել նաև օտարազգի դիմորդներ: Արդեն իսկ աշխատանքներ են տարվում ԿԳՄՍ նախարարության հետ օտար լեզվով կրթական ծրագիր իրականացնելու թույլտվություն ստանալու ուղղությամբ:

Ամփոփելով ելույթը, Ա.Գյոզալյանը հավաստիացրեց, որ ընթացիկ ուստարվա վերջում կներկայացնի 2021-2022 ուստարվա ըստ ԳԱՑ-ի կատարողական զեկույցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանի տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել տնօրինական խորհրդի անդամներին ակտիվ մասնակցել գործող ՌԶԾ-ի գործողությունների իրականացմանը:

4. **Լսեցին** ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի «Դասախոսական կազմի ձևավորման և ազատման» կանոնակարգի վերանայման վերաբերյալ:

Ողջունելով նիստի մասնակիցներին՝ Ա.Գյոզալյանը ներկայացրեց ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ՝ Ժ.Անդրեասյանի կողմից ուղարկված 10.01.2022թ. № 02/10.1/256-2022 շրջաբերականը (շրջաբերականը և հրամանի օրինակը կցվում են):

Շրջաբերականում ներկայացված էր ՀՀ ԿԳՄՍ նախարարի 06.12.2021թ. № 82-Ն հրամանը՝ «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» N 48-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու, ինչպես նաև 10.12.2021 թ. ՀՕ-371-Ն օրենքը՝ ՀՀ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին:

Ամփոփելով ելույթը, Ա.Գյոզալյանը առաջարկեց համաձայն վերոնշյալ շրջաբերականի վերանայել Քոլեջի «Դասախոսական կազմի ձևավորման և ազատման» կանոնակարգը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանը նշեց, որ կարգի վերանայումը կարելի է կազմակերպել սեղմ ժամկետնորում և հաշվի առնելով նախարարի հրամանը

առաջարկեց Տնօրինական խորհրդի հաջորդ նիստում քննարկել և հաստատել կարգը նոր խմբագրությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հանձնարարել ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանին և տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանին վերանայել «Դասախոսական կազմի ձևավորման և ազատման» կանոնակարգը:
2. Հաջորդ նիստին ներկայացնել կարգի նախագիծը նոր խմբագրությամբ:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՏՆՕՐԻՆԱԿՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

Ք.Երևան **28.03.2022թ.**

2022թ. մարտի 28-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի արտահերթ նիստը: Նիստին ներկա էին խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը, քարտուղար Լ.Հարությունյանը, անդամներ՝ Ն.Եգորյանը, Ս.Կեսոյանը, Ն.Սահակյանը, Ս.Հովակիմյանը, Ուսանողական խորհրդի նախագահ Ա.Խուդաթյանը, արտաքին շահակից՝ Ա.Բարեղամյանը և հրավիրված ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալանը:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը և դրվեց քվեարկության, որը միաձայն հաստատվեց:

1. ՀՀԿԳՄՍ նախարար՝ Վ.Դումանյանի 18.02.2022թ. №290-Ա/2 հրամանի վերաբերյալ տեղեկատվության հաղորդում:

   (Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

2. Քոլեջի ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության հանձնաժողովի աշխատանքների ընթացքի մասին:

   (Զեկուցող, ՈԱ պատասխանատու՝ Ա.Գ,Գյոզալյան):

3. «Դասախոսական կազմի ձևավորման և ազատման» կանոնակարգի և «Քոլեջի կառավարման համակարգի արդյունավետության գնահատման» ընթացակարգի նախագծերի հաստատման մասին:

   (Զեկուցող, ՈԱ պատասխանատու՝ Ա.Գ,Գյոզալյան):

4. Այլ հարցեր:

1. **Լսեցին՝** Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը ՀՀԿԳՄՍ նախարար Վ.Դումանյանի 18.02.2022թ. №290-Ա/2 հրամանի վերաբերյալ:

Ողջունելով նիստի բոլոր մասնակիցներին Ն.Եգորյանը տեղեկացրեց, որ համաձայն ՀՀԿԳՄՍ նախարարի 18.02.2022թ. №290-Ա/2 հրամանի, «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ են դիմել «Սուրբ Թերեզայի անվան բժշկական համալսարան»-ի միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորող հիմնական կրթության հիմքով՝ 8 ուսանողներ 3-րդ կուրսի և 1 ուսանող 2-րդ կուրսի «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությամբ, 1 ուսանող 2-րդ կուրսի «Քույրական գործ» մասնագիտությամբ իրենց ուսանողական իրավունքները վերականգնելու և մեր քոլեջում ուսումնառությունը շարունակելու համար:

Ամփոփելով ելույթը, Ն.Եգորյանը նշեց նաև, որ ուսանողների ուսանողական իրավունքի վերակագնումը կկազմակերպվի ՀՀ ԿԳ նախարարի 2011թ. դեկտեմբերի 5-ի №1278-Ն հրամանով հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործա-կան) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման» կարգի համաձայն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

- ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանը իր ելույթում հավելեց, որ համաձայն գործող կարգի պահանջների, ուսանողների իրավունքները վերականգնելուց հետո անհրաժեշտ է կազմակերպել լրացուցիչ պարապմունքներ՝ բաց թողնված ժամերը լրացնելու նպատակով:
- Խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը առաջարկեց ուսումնական մասին սեղմ ժամկետներում ուսումնասիրել դիմող ուսանողների ակադեմիական տեղեկագրերը և համապատասխան գրությամբ տեղեկացնել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հանձնարարել ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին ուսումնասիրել ակադեմիական տեղեկագրերը և արդյունքների մասին տեղեկացնել տնօրենին:
2. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին կազմակերպել հանդիպումներ 2-րդ և 3-րդ կուրսերում ուսումնառությունը շարունակելու համար դիմող ուսանողների ծնողների հետ և տեղեկացնել Քոլեջի ղեկավարության դիրքորոշման մասին:

2. **Լսեցին՝** ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանի ելույթը ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության հանձնաժողովի աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Ա.Գյոզալյանը իր ելույթում հանգամանորեն ներկայացրեց հանձնաժողովի կողմից

իրականացված աշխատանքները համաձայն ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության աշխատանքային խմբի աշխատանքային պլանի:

Պլան-ժամանակացույցի համաձայն ամբողջովին իրականացվել են բոլոր գործողությունները: Նա նշեց, որ այս պահի դրությամբ ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծությունը ամբողջական է, ըստ 10 չափանիշների առկա են բոլոր հիմքերը՝ հավելվածների տեսքով: Ընդհանուր ինքնավերլուծության ծավալը կազմում է 98 էջ, ներառյալ հավելվածների ցանկը: Ինքնավերլուծությունը իր մեջ ներառում է 152 հավելված:

Ա.Գ.Գյոզալյանը ներկայացրեց նաև Քոլեջում ներքին շահակիցներին տրամադրվող ռեսուրսների որակի գնահատման մեխանիզմների բազմազանեցման նպատակով իրականացված աշխատանքները: Նա նշեց, որ Քոլեջի հիմնադիր Մ.Նանյանի կողմից առաջարկվել է հանդիպում-քննարկումներից բացի կազմակերպել նաև առցանց հարցումներ, ուսումնասիրել և վերլուծել Քոլեջի կողմից մատուցվող կրթական ծառայությունների ուժեղ և թույլ կողմերը դասախոսական և ուսանողական կազմի շրջանում: Հաշվի առնելով Մ.Նանյանի առաջարկը, ՈԱ պատասխանատուն անցկացրել է հարցումներ դասախոսական և ուսանողական կազմի շրջանում: Շարունակելով ելույթը, Ա.Գ.Գյոզալյանը ամփոփ ներկայացրեց կատարված հարցումների արդյունքները, ինչպես նաև արդյունքների վերլուծության հիման վրա ներկայացված բարելավման առաջարկությունները (հաշվետվությունները կցվում են):

Ամփոփելով ելույթը Ա.Գ.Գյոզալյանը հավաստիացրեց, որ Քոլեջը ամբողջովին պատրաստ է լրացնելու ՈԱԱԿ-ի կողմից պահանջվող էլեկտրոնային հարցաշարը, որից հետո նոր կարող ենք նաև ինստիտուցիոնալ հավատարմագրման դիմում-հայտը ներկայացնել ՈԱԱԿ հիմնադրամ (ինքնավերլուծությունը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ա.Գ.Գյոզալյանի հաղորդումն ընդունել ի գիտություն և աշխատանքային խմբի աշխատանքը գնահատել բավարար:
2. ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանի կողմից իրականացված հարցումների արդյունքները ընդունել ի գիտություն և գնահատել բավարար:
3. Հանձնարարել ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանին տնօրենին ներկայացնել հարցումների արդյունքների հիման վրա ներկայացված բարելավման առաջարկությունները մեկ փաթեթով:
4. Հանձնարարել ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանին սկսել էլեկտրոնային հարցաշարի լրացման հետ կապված աշխատանքները:
5. Կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար ներկայացնել տնօրենին:

3. Լսեցին ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանի ելույթը «Դասախոսական կազմի ձևավորման և ազատման» կանոնակարգի և «Քոլեջի կառավարման համակարգի

արդյունավետության գնահատման» ընթացակարգի նախագծերի հաստատման վերաբերյալ:

ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանը իր ելույթում մանրամասն և բովանդակալից ներկայացրեց 24.01.2022թ. Տնօրինական խորհրդի նիստի որոշման համաձայն իրականացրած աշխատանքները: Արշխատանքների արդյունքում ամբողջովին վերանայվել և վերախմբագրվել է Քոլեջի «Դասախոսական կազմի ձևավորման և ազատման» կանոնակարգը, մասնավորապես՝

1. **«1. Ընդհանուր դրույթներ»** բաժնում ավելացել է՝ 1.3. կետը, որտեղ ներկայացված է վերանայման հիմքը, այն է՝ «Կանոնակարգի վերանայման հիմք է հանդիսացել ՀՀ ԿԳՄՍ նախարարի 24.12.2020թ. №48-Ն հրամանով հաստատված՝ «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական Հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող Մրցույթի կազմակերպման և անցկացման» կարգը»:
2. **«2. Դասախոսական տարակարգեր»** բաժնում նախկին տարբերակում եղել էր 5 կետ, վերանայման արդյունքում այն 2 կետ է, համապատասխան ենթակետերով:
3. **«3. Դասախոսական կազմի պաշտոնների նշանակման չափանիշները»** բաժինը ամբողջությամբ վերախմբագրվել է, 3.1. կետից դուրս է բերվել «դասավանդողի գործունեության արդյունավետության գնահատումը» ենթակետը: 3.2. կետը նախկինում ուներ 6 ենթակետ, վերանայման արդյունքում ներկայացված է 3 ենթակետով:
4. **«4. Դասախոսական կազմի ձևավորման կարգը»** բաժնում ներառվել են նոր կարգի դրույթները՝ մրցույթի վերաբերյալ հայտարարության հրապարակման եղանակները, մրցույթի մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը և այլն:

Շարունակելով ելույթը Ա.Գ.Գյոզալյանը ներկայացրեց նաև «Քոլեջի կառավարման համակարգի արդյունավետության գնահատման» ընթացակարգի նախագիծը, որը համաձայն ՈԱ պատասխանատուի աշխատանքային պլանի նախատեսվում էր մշակել և 2021-2022 ուստարվա ընթացքում ներկայացնել հաստատման: Նա նշեց, որ ընթացակարգը հնարավորություն է ընձեռելու պարբերաբար գնահատել Քոլեջում իրականացվող կառավարման համակարգի արդյունավետությունը և անհրաժեշտության դեպքում իրականացնել բարելավմանը միտված միջոցառումներ:

Եզրափակելով ելույթը, Ա.Գ.Գյոզալյանը նշեց նաև, որ կանոնակարգի վերանայված տարբերակը և ընթացակարգի նախագծերը նախապես ներկայացվել է Տնօրինական խորհրդի անդամներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

- Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը և տնօրեն Ի.Վարդանյանը: Նրանք իրենց ելույթում նշեցին, որ ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանը իրոք շատ օպերատիվ և որակյալ աշխատանք է իրականացրել և առաջարկեցին հաստատել ներկայացված փաստաթղթերի նախագծերը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել Քոլեջի «Դասախոսական կազմի ձևավորման և ազատման» կանոնակարգի նախագիծը նոր խմբագրությամբ:
2. Հաստատել «Քոլեջի կառավարման համակարգի արդյունավետության գնահատման» ընթացակարգի նախագիծը:
3. Հանձնարարել ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանին նոր փաստաթղթերը հասանելի դարձնել ներքին և արտաքին շահակիցներին:

4. **Լսեցին.** Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությամբ 3-րդ կուրսի հիմնական կրթության հիմքով ուսանող Շահինյան Գոհար Արմենի քոլեջից հեռացման մասին:

Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանն իր ելույթում ներկայացրեց, որ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությամբ 3-րդ կուրսի հիմնական կրթության հիմքով ուսանող Գոհար Արմենի Շահինյանը 2021-2022 ուսումնակա տարվա երկրորդ կիսամյակում ունեցել է 144 ժամ և ավելի անհարգելի բացակայություն: Ընթացիկ կիսամյակում (հրաման № ԸԳ 18-Ա /02.03.2022թ.) տրվել է նկատողություն: Համաձայն ընթացակարգի մի քանի անգամ տեղեկացվել է ուսանողի ծնողին, որի արդյունքում ոչ մի դրական առաջխաղացում չի գրանցվել:

Հաշվի առնելով այս հանգամանքը առաջարկեց քննարկել ուսանող Գոհար Արմենի Շահինյանի հեռացման վերաբերյալ հարցը և կայացնել համապատասխան որոշում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

- Տնօրեն Ի.Վարդանյանն իր ելույթում նշեց, որ անհրաժեշտ է ևս մեկ անգամ կապ հաստատել ուսանողի ծնողների հետ և տեղեկացնել Քոլեջի տնօրինության որոշման մասին:

❖Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը նշեց, որ այսօր ևս կփորձի կապ հաստատել ուսանողի ծնողների հետ և վերջնական որոշման մասին կտեղեկացնի:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին մեկ շաբաթվա ընթացքում պատրաստել ուսանող Գոհար Արմենի Շահինյանի հեռացման հրամանը և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՏՆՕՐԻՆԱԿՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

Ք.Երևան **29.04.2022թ.**

2022թ. ապրիլի 29-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի արտահերթ նիստը: Նիստին ներկա էին խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը, քարտուղար Լ.Հարությունյանը, անդամներ՝ Ն.Եգորյանը, Ա.Գյոզալյանը, Ս.Կեսոյանը, Ն.Սահակյանը, Ս.Հովակիմյանը, Ուսանողական խորհրդի նախագահ Ա.Խուդաթյանը, արտաքին շահակից Ա.Բարեղամյանը և հրավիրված ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալանը:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ հայտնեց, որ արտահերթ նիստը հրավիրվել է քոլեջի ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանի առաջարկով, որից հետո ներկայացրեց օրակարգը և դրվեց քվեարկության, որը միաձայն հաստատվեց:

1. ՈԱԱԿ հիմնադրամի տնօրեն՝ Ռ.Թոփչյանի գրության մասին:

(Զեկուցող, ՈԱ պատասխանատու՝ Ա.Գ.Գյոզալյան):

2. Քոլեջում ըստ մասնագիտական կրթական ծրագրերի ուսման վարձավճարի վերանայման մասին:

(Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

3. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. ՌԶԾ-ի ընթացքի մասին:

(Զեկուցող՝ ՈԱ պատասխանաու՝ Ա.Գ.Գյոզալյան):

1. **Լսեցին՝** ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանի ելույթը ՈԱԱԿ հիմնադրամի տնօրեն՝ Ռ.Թոփչյանի գրության վերաբերյալ:

Ողջունելով նիստի բոլոր մասնակիցներին Ա.Գ.Գյոզալյանը ներկայացրեց ինստիտուցիոնալ հավատարմագրման աշխատանքների մեկնարկի հետ կապված

արտահերթ նիստ հրավիրելու անհրաժեշտությունը:

Շարունակելով խոսքը Ա.Գ.Գյոզալյանը տեղեկացրեց, որ տնօրինական խորհրդի 28.03.2022թ. № 4 նիստի արձանագրության 2.2. որոշման համաձայն (Հանձնարարել ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանին սկսել էլեկտրոնային հարցաշարի լրացման հետ կապված աշխատանքները) ինքնավերլուծության էլեկտրոնային հարցաշարը սեղմ ժամկետներում ամբողջովին լրացվել է և կատարված աշխատանքների մասին զեկուցվել քոլեջի տնօրենին: Քոլեջի տնօրենի հանձնարարությամբ 19.04.2022թ. «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ է ներկայացվել Քոլեջի ինստիտուցիոնալ հավատարմագրման դիմում-հայտը:

Ելույթի վերջում Ա.Գ.Գյոզալյանը ընթերցեց ՈԱԱԿ հիմնադրամի տնօրեն՝ Ռ.Թոփչյանի 25.04.2022թ. № Հ-04/22-070 գրությունը (գրությունը կցվում է):

Ամփոփելով ելույթը՝ Ա.Գ.Գյոզալյանը նշեց, որ ՈԱԱԿ-ի այս գրությամբ ինստիտուցիոնալ հավատարմագրման մեկնարկը տրված է: Հաշվի առնելով այս հանգամանքը խնդրեց տնօրինական խորհրդին կայացնել համապատասխան որոշումներ հավատարմագրման գործընթացում Քոլեջը պատշաճ ներկայացնելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

- Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը իր ելույթում նշեց, որ ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանի կողմից հանձնարարված ուսումնական գործընթացին առնչվող առկա բոլոր փաստաթղթերը վերանայվել են, մշակվել են մի շարք նոր փաստաթղթեր:
- ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանը տեղեկացրեց, որ Քոլեջի ներքին նորմատիվային փաստաթղթերը նույնպես վերանայվել և խմբագրվել են:
- Ուսանողական խորհրդի նախագահ Ա.Խուդաթյանը իր ելույթում նշեց, որ ուսանողական խորհուրդը վերջին երկու տարիների ընթացքում ամբողջովին ներգրավված է եղել Քոլեջում իրականացվող բարեփոխումների աշխատանքներին և ակտիվ մասնակցել է ՈԱ պատասխանատուի կողմից կազմակերպված բոլոր հանդիպումներին և քննարկումներին: Վերջում Ա.Խուդաթյանը նշեց, որ լինելով ավարտական կուրսի ուսանող, իր խիստ զբաղվածությունը, որոշել էր հրաժարական ներկայացնել խորհրդի նախագահի պաշտոնից, սակայն հաշվի առնելով այս

հանգամանքը, կմնա և մինչև վերջ կհամակարգի ուսանողների մասնակցությունը ինստիտուցիոնալ հավատարմագրման աշխատանքներում:

- Խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը շնորհակալություն հայտնեց ինստիտուցիոնալ ինքնավերլուծության աշխատանքային խմբին, հանձինս ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանին սեղմ ժամկետներում այդքան ահռելի աշխատանքներ կատարելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին հնգօրյա ժամկետում տնօրենին ներկայացնել օպերատիվ աշխատանքների կազմակերպման ժամանակացույց:
3. Հանձնարարել ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանին մինչև մայիսի 20-ը կազմակերպել առանձին հանդիպումներ՝ ամբիոնների և ուսանողների հետ իրազեկելու ընթացիկ աշխատանքների մասին:
4. Տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին և ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանին. յուրաքանչյուր ուրբաթ օր կատարված աշխատանքների վերաբերյալ զեկույցել տնօրենին:

2. **Լսեցին՝** Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը Քոլեջում ըստ մասնագիտական կրթական ծրագրերի ուսման վարձավճարի վերանայման վերաբերյալ:

Ն.Եգորյանը ներկայացրեց 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի ընթացքում ՈԱ պատասխանատուի կողմից դասախոսների շրջանում կազմակերպված հարցումների արդյունքների վերլուծությունը (վերլուծությունը կցվում է): ՈԱ պատասխանատուի բարելավման առաջարկություններով պայմանավորված, քոլեջի նյութատեխնիկական միջոցների, ուսումնական ռեսուրսների արդիականացման և դասախոսական կազմի սոցիալական վիճակի բարելավման նպատակով, անհրաժեշտություն է առաջացել վերանայել Քոլեջում ուսման վարձավճարների չափը:

Հաշվի առնելով այս ամենը, Ն.Եգորյանն առաջարկեց 2022-2023 ուստարվա համար սահմանել ըստ մասնագիտության կրթական ծրագրերի համապատասխան ուսման վարձավճարի նոր չափ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

- Խորհրդի նախագահ Ի Վարդանյանը իր ելույթում նշեց, որ հաշվի առնելով Քոլեջի միջազգային կապերի ընդլայնումը և գործող պայմանագրերի շրջանակում պլանավորվող միջոցառումները պահանջում են որոշակի ֆինանսկան միջոցներ: Մեր միջազգային գործընկերների հետ տարբեր ծրագրեր իրականացնելու համար Քոլեջը չունի բավարար ֆինանսական ռեսուրսներ, այդ իսկ պատճառով իրոք անհրաժեշտ է որոշ չափով բարձրացնել ուսման վարձավճարները:
- ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանը իր ելույթում նշեց, որ Քոլեջի կազմակերպահրավական կարգավիճակը թույլ է տալիս ինքնուրույն որոշել և սահմանել համապատասխան վարձավճարի չափ: Շարունակելով ելույթը Ա.Գ.Գյոզալյանը հավելեց, որ արդեն իսկ քոլեջում մեկնարկել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը, որի արդյունքում նախատեսվում է մինչև 2022-2023 ուստարվա ավարտը ստանալ ինստիտուցիոնալ հավատարմագրում: Այս ամենը բերելու է նրան, որ բարձրանալու է նաև Քոլեջի կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակը: Այս ամենը միասին հնարավորություն կտա որոշակի ֆինանսական միջոցների ավելացում, որը բխում է նաև մեր ՌԶԾ-ից:
- Հաշվապահ Ս.Հովակիմյանը իր ելույթում նշեց. քանի որ արդեն իսկ Քոլեջը ներգրավված է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացում, ապա ուսման վարձավճարի ավելացումը տեղին և ժամանակին է:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Քոլեջում ուսման վարձավճարների չափի ավելացման վերաբերյալ հարցը բավարարել և ներկայացնել Քոլեջի Ընդհանուր ժողով:
2. Հանձնարարել հաշվապահ՝ Ս.Հովակիմյանին հնգօրյա ժամկետում կատարել համապատասխան հաշվարկներ և սահմանված ուսման վարձավճարի նոր չափի նախագիծը ներկայացնել Ընդհանուր ժողով:

3. Լսեցին ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024 թվակնների ռազմավարական զարգացման ծրագրի ընթացքի վերաբերյալ:

Ա.Գ.Գյոզալյանը իր ելույթում ներկայացրեց «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. ռազմավարական զարգացման ծրագիր ընթացքը, որը ամբողջովին համաձայն պլան-ժամանակացույցի և ԳԱՑ-ի գործարկվում է և որևէ խնդիր չի առաջացել: Նշեց նաև, որ համաձայն ՌՋԾ-ի պլան-ժամանակացույցի, նախատեսվում է 2022-2023 ուստարվանից կազմակերպել օտարազգի դիմորդների ընդունելություն:

Այդ նպատակով հիմնադիր Մ.Նանյանի կողմից կատարվել է Քոլեջի կանոնադրության փոփոխություն (գրանցված ՀՀ պետական ռեգիստրի կողմից), որի արդյունքում Քոլեջն իրավունք ունի իրականացնելու օտար լեզվով կրթական ծրագրեր: Հաշվի առնելով այս հանգամանքները, նախատեսվում է մինչև մայիս ամսվա վերջ ՀՀ ԿԳՄՍ նախարարություն ներկայացնել 0913.02.5 «Քույրական գործ» մասնագիտությամբ օտար լեզվով կրթություն իրականացնելու թույլտվության դիմումը:

Թույտվություն ստանալու համար հիմնադիր Մ.Նանյանի հանձնարարությամբ, աշխատանքային խումբը, ՈԱ պատասխանատու Ա.Գյոզալյանը, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը, ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանը և ուսումնական մասի քարտուղար Հ.Քոչարյանը սեղմ ժամկետներում իրականացրել են համապատասխան աշխատանքներ, մասնավորապես.

1. Մշակվել է անգլերեն լեզվով 0913.02.5 «Քույրական գործ» մասնագիտության ուսումնական պլանի նախագիծը:
2. Ամբողջովին պատրաստվել է անգլերեն լեզվով ըստ ՊԿՋ-ի առարկայական ծրագրերի փաթեթի նախագիծը:
3. Անգլերեն լեզվով դասավանդող դասախոսական կազմի հիմնական թեկանածուների հետ արդեն իսկ պայմանավորվածություն է ձեռքբերվել:
4. Մնացել է միայն մեկ պրակտիկայի բազայի հետ կնքել պայմանագիր:

Ամփոփելով ելույթը, Ա.Գ.Գյոզալյանը նշեց, որ այս պահի դրությամբ մոտ 4 օտարազգի դիմորդներ արդեն իսկ ներկայացրել են անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները: Այդ իսկ պատճառով առաջարկեց քննարկել և հաստատել ներկայացված փաստաթղթերի նախագծերը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել 0913.02.5 «Քույրական գործ» մասնագիտության անգլերեն լեզվով ուսումնական պլանի նախագիծը:
2. Հաստատել անգլերեն լեզվով ըստ ՊԿՁ-ի առարկայական ծրագրերի փաթեթի նախագիծը ամբողջությամբ:
3. Հանձնարարել ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանին և ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանին մինչև մայիսի 23 համալրել անգլախոս դասախոսական կազմը ըստ ուսումնական պլանի:
4. Հանձնարարել ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանին մինչև մայիսի 25 պատրաստել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն ներկայացվող օտար լեզվով ուսումնական գործընթացի թույլտվության փաթեթը:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՏՆՕՐԻՆԱԿՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6

Ք. Երևան **04.05.2022թ.**

2022թ. մայիսի 4-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի արտահերթ ընդլայնված նիստը, հիմնադիր՝ Մ.Նանյանի նախագահությամբ: Նիստին ներկա էին քոլեջի տնօրեն՝ Ի.Վարդանյանը, խորհրդի քարտուղար՝ Լ.Հարությունյանը, անդամներ՝ Ն.Եգորյանը, Ա.Գյոզալյանը, Ս.Կեսոյանը, Ն.Սահակյանը, Ս.Հովակիմյանը, Ուսանողական խորհրդի նախագահ՝ Ա.Խուդաթյանը, արտաքին շահակից՝ Ա.Բարեղամյանը, հրավիրվածներ՝ ՈԱ պատասխանատու՝ Ա.Գ.Գյոզալանը, ամբիոնի վարիչներ՝ Ա.Մարգարյանը, Լ.Բաբայանը, Ա.Մելքոնյանը, Ա.Գրիգորյանը, ուսանողական խորհուրդը ամբողջ կազմով, ինչպես նաև պատվավոր հյուր՝ Շենգավիթ համայնքի «Միասնական սոցիալական ծառայության Շենգավիթի տարածքային կենտրոնի» տնօրեն Ա.Թորոսյանը:

Հիմնադիր Մ.Նանյանը, ողջունելով նիստի մասնակիցներին, ներկայացրեց օրակարգը, որը քվերակաությամբ միաձայն հաստատվեց:

1. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջում իրականացվող ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի աշխատանքների մասին:

   (Զեկուցող, ՈԱ պատասխանատու՝ Ա.Գ.Գյոզալյան):

2. Քոլեջում ուսումնական գործընթացներում ակտիվ մասնակցության համար ուսանողական և դասախոսական կազմին խրախուսելու մասին:

   (Զեկուցող, ՈԱ պատասխանատու՝ Ա.Գ.Գյոզալյան):

1. **Լսեցին՝** ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջում իրականացվող ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի աշխատանքների վերաբերյալ:

Ողջունելով նիստի բոլոր մասնակիցներին՝ Ա.Գ.Գյոզալյանը շնորհակալություն հայտնեց խորհրդի անդամ, արտաքին շահակից Ա.Բարեղամյանին, Քոլեջի կառավարման, ուսումնական և շրջանավարտների զբաղվածության հարցերում ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար: Շարունակելով ելույթը Ա.Գյոզալյանը ամփոփ ներկայացրեց ինստիտուցիոնալ հավատարմագրման աշխատանքների ընթացքը, մասնավորապես՝

- Ինքնավերլուծությունը արդեն իսկ ավարտված է, որը բաղկացած է 98 էջից, պարունակում է 152 հավելվածներ:
- Պատրաստվում է օտար լեզվով կրթական ծրագիր իրականացնելու թույլտվություն ստանալու համար ՀՀ ԿԳՄՍ նախարարություն ներկայացնելու փաթեթը:

Ամփոփելով ելույթը, Ա.Գյոզալյանը խոսքը փոխանցեց նիստին մասնակցող ՄՄԾ Շենգավիթի ՏԿ տնօրեն Ա.Թորոսյանին:

Արտահայտվեցին.

ՏԿ տնօրեն Ա.Թորոսյանը նախ ողջունեց նիստի մասնակիցներին, շնորհակալություն հայտնեց հրավերի և իրենց կենտրոնի հետ ակտիվ համագործակցության համար: Ա.Թորոսյանը նախ ամփոփ և բովանդակալից ներկայացրեց սոցիալական ապահովության, մասնավորապես զբաղվածության ոլորտում իրականացվող աշխատանքները, քոլեջի հետ հետագա համագործակցության ուղղություններն ու անելիքները: Հետո ողջունեց քոլեջում նման նախաձեռնությունները, համագործակցությունը պետական և մասնավոր կառույցների հետ:

Ամփոփելով ելույթը, Ա.Թորոսյանը առաջարկեց իրենց կենտրոնում մոտ ժամանակներս, կազմակերպել ընդլայնված աշխատանքային քննարկում, քոլեջի ղեկավարության և պոտենցիալ գործատուների հետ:

ՈԱ պատասխանատու Ա.Գյոզալյանը անդրադառնալով Ա.Թորոսյանի առաջարկությանը իր կողմից երաշխավորեց, որ մինչև մայիսի վերջ իրենց կներկայացնի աշխատանքային քննարկման օրակագի նախագիծը: Օրակարգի հաստատումից հետո սեղմ ժամկետներում կկազմակերպվի այդ հանդիպումը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանին մինչև մայիսի 25-ը մշակել և տնօրենին ներկայացնել աշխատանքային հանդիպման օրակարգի նախագիծը:

2. Լսեցին՝ ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանի ելույթը Քոլեջում ուսումնական գործընթացներում ակտիվ մասնակցության համար ուսանողական և դասախոսական կազմին խրախուսելու վերաբերյալ:

Ա.Գ.Գյոզալյանը իր ելույթում ամփոփ ներկայացրեց «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջում 2018-2019 ուստարվանից մեկնարկած հիմնարար բարեփոխումների արդյունքները: Հիմնականում առանձնացրեց ուսանողական խորհրդի ակտիվ մասնակցությունը, հատկապես ուսումնական փաստաթղթերի վերանայման և նորերի մշակման ընթացքում: Կազմակերպված առցանց հարցումներին ակտիվ մասնակցությունը ևս խոսում է այն մասին, որ ուսանողությունը անտարբեր չէ քոլեջում իրականացվող գործընթացներից:

Եզրափակիչ խոսքում Ա.Գ.Գյոզալյանը ներկայացրեց Քոլեջի տնօրենին 18.04.2022թ ներկայացրած իր զեկուցագիրը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին ընթերցել տնօրենի 19.04.2022թ. № ԿԳ 12-Ա հրամանը:

Նիստի վերջում ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը համաձայն տնօրենի հրամանի, ներկայացրեց խրախուսմանն ներկայացված դասախոսական և ուսանողական կազմին:

Դասախոսական և ուսանողական կազմին որպես խրախոսում տրվեցին Քոլեջի անվանական շնորհակալագրեր և դրամական պարգևներ:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՏՆՕՐԻՆԱԿՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 7

Ք.Երևան **29.06.2022թ.**

2022թ. հունիսի 29-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի 2021-2022 ուստարվա ամփոփիչ նիստը: Նիստին ներկա էին խորհրդի նախագահ՝ Ի.Վադայանը, քարտուղար՝ Լ.Հարությունյանը, անդամներ՝ Ա.Գյոզալյանը, Ս.Հովակիմյանը, Ն.Սահակյանը, Ս.Կեսոյանը, ուսանողական խորհրդի նախագահ՝ Ա.Խուդաթյանը, արտաքին շահակից՝ Ա.Բարեղամյանը, հրավիրած ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանը, ՊՈՀ նախագահներ՝ Ա.Մանուկյանը, Կ.Սարգսյանը և հրավիրված ուսանող՝ Ա.Գալստյանը:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը և դրվեց քվեարկության, որը միաձայն հաստատվեց:

1. 2021-2022 ուստարվա ամառային քննաշրջանի ամփոփման մասին:

   (Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):
2. 2021-2022 ուստարվա պետական ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին:

   (Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):
3. Ամբիոններում դասավանդվող առարկայական դասընթացների վերադասավորման մասին:

   (Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):
4. Քոլեջի ուսանողական խորհրդի կազմում փոփոխություններ կատարելու մասին:

   (Զեկուցող, ուսանողական խորհրդի նախագահ՝ Ա.Խուդաթյան):
5. 2021-2022 ուստարվա միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով ուսումնառող ուսանողներին հաջորդ կուրս փոխադրելու մասին:

   (Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):

1. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը 2021-2022 ուստարվա ամառային քննաշրջանի ամփոփման վերաբերյալ:

Ողջունելով նիստի բոլոր մասնակիցներին, Լ.Հարությունյանը ներկայացրեց միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով «Ատամնատեխնիկական գործ», «Դեղագործություն», «Մանկաբարձական գործ» և «Քույրական գործ» մասնագիտություններով բոլոր կուրսերում 2021-2022 ուստարվա ամառային քննաշրջանը կազմակերպվել և անցկացվել է ուսումնական օրացույցի և հաստատված ժամանակացույցին համապատասխան՝ 29.04.2022թ.– 28.06.2022թ.:

Քոլեջի բոլոր կուրսերում տնօրենի տեղակալի, ուսումնական մասի վարիչի, ամբիոնների վարիչների մասնակցությամբ կազմակերպվել և անցկացվել են քննաշրջանի հետ կապված խորհրդակցություններ:

Կիսամյակի սկզբից ուսանողներին տրամադրվել են բոլոր դասընթացների հարցաշարերը, կիսամյակի ընթացքում և քննություններից առաջ դասախոսները անցկացրել են առարկայական խորհրդատվություններ:

Քննաշրջանի ավարտին, յուրաքանչյուր կուրսի հետ ամփոփվել են տվյալ կուրսի քննաշրջանի արդյունքները, բարձրաձայնվել առաջադիմության հետ կապված հարցեր, մասնավորապես ակադեմիական պարտքեր ունեցողներից յուրաքանչյուրին առանձին-առանձին նորից հիշեցվել են ակադեմիական պարտքերի քանակը և դասընթացները:

Քննաշրջանի ժամանակացույցերը հասանելի են եղել բոլոր ուսանողներին:

Քննաշրջանի ողջ ընթացքը վերահսկվել է տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի, ՈԱ պատասխանատու և ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի կողմից: Քոլեջի ամբիոնների վարիչները մասնակցել են ամբիոնների համապատասխան դասընթացների քննություններին:

Ամառային քննաշրջանում միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով միասին կազմակերպվել և անցկացվել են ընդհանուր թվով 206 ստուգարք և 22 քննություն:

Ամփոփելով ելույթը Լ.Հարությունյանը նշեց, որ ամբողջական տեղեկատվությունը ներկայացված է հաշվետվությունում (հաշվետվությունը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. Հետևողական լինել չառաջադիմող ուսանողների նկատմամբ:

3. Տնօրենի տեղակալին, ամբիոնի վարիչներին. բացատրական աշխատանքներ տանել քննություններին անհարգելի պատճառով չներկայացող ուսանողների հետ:
4. Հանձնարարել Ուսումնական մասին. կազմակերպված անցկացնել 2021-2022 ուստարվա ամառային քննաշրջանի ակադեմիական պարտքերի մարման գործընթացը:

2. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը 2021-2022 ուստարվա պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների վերաբերյալ:

Լ.Հարությունյանը տեղեկացրեց, որ ըստ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված կարգի ժամանակացույցին համապատասխան մասնագիտական ամբիոնների վարիչների և դասախոսների կողմից ամբիոններում քննարկվել են պետական ամփոփիչ ատեստավորման քննական հարցաշարերը, քննական տոմսերը և երաշխավորվել են հաստատման:

Հարությունյանը ներկայացրեց «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրենի համապատասխան հրամանները, որով հաստատվել են 2021-2022 ուստարվա պետական որակավորող հանձնաժողովի կազմեր.

1. 0916.01.5 «Դեղագործություն 16.05.2022թ. Հրաման №ԸԳ-35-Ա նախագահ՝ Կարեն Սարգսյան «Դենտալ-Ֆարմ» ՍՊԸ-ի տնօրեն:
2. 0911.01.5 «Ատամնատեխնիկական գործ» 16.05.2022թ. Հրաման №ԸԳ-36-Ա նախագահ՝ Արման Մանուկյան «Նյու-Հոփ» ատամնաբուժական կլինիկա ՍՊԸ-ի տնօրեն:

Շարունակելով ելույթը Լ.Հարությունյանը խնդրեց պետական որակավորող հանձնաժողովների նախագահներին ներկայացնել հաշվետվությունները և կարծիքները:

ԵԼՈՒՅԹՆԵՐ.

- 0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտության պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաողովի նախագահ՝ Կարեն Սարգսյանը («Դենտալ–Ֆարմ» ՍՊԸ-ի տնօրեն) ներկայացրեց երկու քննությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն: Ժամանակի սղության պատճառով խնդրեց ամբողջ հաշվետվությունը չնթերցել, քանի, որ այն ամբողջ ծավալով տպված և ներկայացված է խորհրդի քարտուղարին:

- 2.0911.01.5 «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաողովի նախագահ՝ Արման Մանուկյանը («Նյու-Հոփ» ստոմատոլոգիական կենտրոն ՍՊԸ-ի տնօրեն) ևս ներկայացրեց երկու քննությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, նշելով, որ իր հաշվետվությունը ևս տպված և ներկայացված է խորհրդի քարտուղարին:

Եզրափակելով ելույթը, Լ.Հարությունյանը հավելեց, որ ամփոփիչ ատեստավորման վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը ներկայացված է հանձնաժողովների նախագահների հաշվետվություններում (հաշվետվությունը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին ուսումնասիրել հանձնաժողովների նախագահների առաջարկությունները և հաջորդ ուստարվա ընթացքում ներկայացնել բարելավման միջոցառումներ:

3. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը ամբիոններում դասավանդվող առարկայական դասընթացների վերադասավորման վերաբերյալ:

Լ.Հարությունյանն իր ելույթում ներկայացրեց «Անատոմիայի, ֆիզիոլոգիայի, մանրէաբանության և հիգիենայի» ամբիոնի վարիչ՝ Ա.Մարգայանի զեկուցագիրը, որում առաջարկվում է «Կենսաբանություն» առարկայական դասընթացը «Սոցիալ-տնտեսագիտական, ընդհանուր հումանիտար և բնագիտական առարկաների» ամբիոնից տեղափոխել «Անատոմիայի, ֆիզիոլոգիայի, մանրէաբանության և հիգիենայի» ամբիոն (զեկուցագիրը կցվում է):

Շարունակելով ելույթը Լ.Հարությունյանն առաջարկեց քննարկել և կայացնել համապատասխան որոշում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին կատարել համապատասխան փոփոխությունները:

4. **Լսեցին՝** Ուսանողական խորհրդի նախագահ Ա.Խուդաթյանի ելույթը Քոլեջի ուսանողական խորհրդի կազմում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Ուսանողական խորհրդի նախագահ Ա.Խուդաթյանը շնորհակալություն հայտնեց տնօրինական խորհրդի անդամներին, մասնավորապես, Քոլեջի հիմնադիր՝ Մ.Նանյանին և տնօրեն Ի.Վարդանյանին ջերմ և հոգատար վերաբերմունքի համար, ինչպես իր, այնպես էլ ողջ ուսանողության նկատմամբ:

Շարունակելով ելույթը Ա.Խուդաթյանը նշեց, քանի որ ուսանողական խորհրդի ներկայիս կազմից 4 անդամ ավերտեցին Քոլեջը, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է կատարել ուսանողական խորհրդի կազմի համալրում: Նա հավելեց նաև, որ ուսանողական խորհուրդը առաջարկում է օգոստոսին կազմակերպել արտահերթ նիստ, որը կնախագահի խորհիդի փոխնախագահ Ա.Գալստյանը: Հրավիրված խորհրդի նիստին կկազմակերպվի ընտրություններ, որտեղ կնտրվեն՝ խորհրդի նախագահ, քարտուղար և անդամները:

ԵԼՈՒՅԹՆԵՐ.

- Տնօրեն Ի.Վարդանյանը իր ելույթում ևս շնորհակալություն հայտնեց Ա.Խուդաթյանին ակտիվ և բարեխիղճ աշխատանքի համար, մասնավորապես վերջին տարվա ընթացքում Քոլեջում ընթացքող բարեփոխումների աշխատանքներում ակտիվ մասնակցության համար:
- Ուսանող Ա.Գալստյանը իր ելույթում հաստատեց, որ ինքը որպես ուսանողական խորհրդի փոխնախագահ, խորհրդի մյուս անդամների հետ միասին կանեն ամեն հնարավորը օգոստոսի վերջին բարձր մակարդակով կազմակերպել ուսանողական խորհրդի արտահերթ նիստը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Օգոստոսի 30-ին հրավիրել ուսանողական խորհրդի արտահերթ նիստ, ընտրություններ կազմակերպելու համար:
2. Հանձնարարել ուսանողական խորհրդի փոխնախագահ Ա.Գալստյանին իրականացնել կազմակերպչական աշխատանքները և զեկուցել տնօրենին:

5. **Լսեցին.** Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը 2021-2022 ուստարվա միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով ուսումնառող ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու վերաբերյալ:

Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանն իր ելույթում ներկայացրեց 2021-2022 ուստարվա ուսումնական պլանները կատարած, ստուգարքներն ու քննությունները հանձնած միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով կրթական ծրագրով սովորող «Ատամնատեխնիկական գործ», «Դեղագործություն», «Մանկաբարձական գործ» և «Քույրական գործ» մասնագիտություններով ուսումնառողների ցանկը: Հանգամանորեն ներկայացրեց ստուգարքների և քննությունների ըստ մասնագիտությունների դրական գնահատական ստացած ուսանողների ցուցակները:

Եզրափակելով ելույթը՝ Լ.Հարությունյանն առաջարկեց ցուցակում ներառված ուսանողներին փոխադրել հաջորդ կուրս: Փոխադրվողների ցանկում ներառված են նաև փորձաշրջանում գտնվող ուսանողները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Ցուցակում ներառված ուսանողներին փոխադրել հաջորդ կուրս, համապատասխանաբար:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան